— ԺԱՄԱՆԱԿ՝ ԺԶ.—ԺԷ. դար: — ԳԾՈՂ՝ Նիկողայոս: — ՏԵՂԻ՝ անծանօթ: — ՏԷՐ՝ Մատեսի Յարութիւն եւ Մինաս: — ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ՝ ցիր ցան մի քանի հատ: — ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ՝ Սեպհականութիւն Ամիրխանեան ֆոյերու ի վառնա:

Մատեանս է Յայսմաւուրք: Շատ պակասաւոր է եւ խառն դասաւորուած: Արդ մնացած են՝ Ահեկի ամսէն մաս մը, Արաց՝ ամբողջ, Մեհեկի՝ ամբողջ, Արեգ եւ Քաղց՝ գրեթէ ամբողջ, թէեւ եռեւառաջութիւն կայ: Արացի սկիզբն է՝ Արաց ամսոյ ԻԱ. եւ Յունվարի Ը. վերատին ոօն է Ծննդեան եւ Յայտնութեան Յիսուսի Քրիստոսի Աստուծոյ մերոյ: Եւ վկայաբանութիւն սրբոյն Թէոփիլեայ: Սուրբն Թէոփիլոս էր ի Լիբիոյ հաւատով քրիստոնեայ եւ աստիճանաւ սարկաւագ:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ. Արաց Ա.էն յառաջ «Ողորմեա ստացողի Ս. Գրոցս մահատեսի Յարութենին եւ ծնողացն Սարգսին եւ Հօռմին, եղբօրն Գաբրիէլին, քերցն Մարիանին եւ Կատարին, հօրեղբօրն տէր Առաքելին եւ ինձ բազմամեղ եւ անարժան Նիկողայոս գծաւղի եւ ծնողացն իմոց Տէր Սարգսին Հէրիքնասին»: Արաց Բ.՝ Քրիստոս Աստուած... ողորմեա ստացողի սուրբ Գրոցս մահատեսի Յարութենին եւ ծնողացն Սարգսին եւ Հօռմին, եղբօրն Գաբրիէլին, քերցն Մարիանին եւ Կատարինին, հօրեղբօրն տէր Առաքելին եւ սրբազրողի սորա եւ գծողի»: Արաց Գ.՝ «...Տէր Յիսուս ողորմեա ստացողի գրոցս մահատեսի Մինասին եւ ծնողացն Մնացականին եւ Եթարին, հօրեղբօրն տէր Խաչատուրին եւ սրբազրողի սորա տէր Սարգսին եւ գծողի Նիկողայոսին եւ թուղթ կոկողին եւ գաղափար շնորհողին»: Մեհեկի ԺԵ.՝ «...Մանաւանդ ստացողի գրոցս Յարութենին եւ ծնողացն Սարգսին եւ Հօռմին: Եղբօրն Գաբրիէլին, քերցն Մարիանին եւ Կատարին, հօրեղբօր Տէր Առաքելին...»:

Համանման յիշատակագրութիւններ (նոյն անուններու կրկնութեամբ) կը գտնուին գրեթէ ամէն վկայաբանութեան եռեւ: Գլխաւոր յիշատակարանը կը պակսի:

(Շարունակելի:)

Հ. Հ. ՈՍԿԵԱՆ

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՆԹԻՈՆՆԵՐՈՒՄ

(Շարունակութիւն:)

ԱՂԷՔՍԱՆԴՐ ԵՐԻՑԵԱՆ
(1841—1908)

Ուզո՞ւմ էք ծանօթանալ կովկասահայերի նոր շրջանի պատմութեան, նրա տնտեսական, քաղաքական եւ կուլտուրական կեանքի բնորոշ մօմէնտների հետ: Ուզո՞ւմ էք ուսումնասիրել Ներսիսեան դպրոցի պատմութիւնը, հայկական տպագրութեան պատմութիւնը եւ այլ պատմական արժէքաւոր նիւթեր, ապա բաց արէք «Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը եւ Կովկասի հայք ԺԹ. դարում», «Պատմութիւն 75ամեայ գոյութեան Ներսիսեան հոգեւոր դպրոցի», «Ներսէս Ե. Աշտարակեցի», «Խաչատուր Աբովեանի կենսագրութեան համար նոր նիւթեր», «Հայկական տպագրութեան պատմութիւնը» եւ այլն:

Այդ պատմական հատորների ճակատին գրուած է մի անուն — Աղէքսանդր Երիցեան:

*

Խօջիվանքում, Յովհաննէս Թումանեանի եւ Աչուղ Զիւանու գերեզմաններին կից, կայ երկաթէ ցօղերով հիւսուած մի ցանկապատ: Այդտեղ է հանգչում Երիցեանը:

Մուգ-մոխրագոյն կրանիտէ քարից, բարձր, հաստ եւ քառակուսի երկու պատուանդանից կերտուած մի կոթող զարդարել է նրա հողակոյտը: Վերեւի քառակուսի ֆորմաներով քանդակուած պատուանդանի հարաւային կողմը, սեւ փայլուն մարմար քարի վրայ փորագրուած է.

ԱՂԷՔՍԱՆԴՐ ԴԱՒԹԵԱՆ
ԵՐԻՑԵԱՆՑ
1841—1908

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆ
(1869—1923)

Աղ. Երիցեանի եւ Աչուղ Զիւանու շիրիմների մօտ հայեացքս գրաւում է պարզ եւ անպաճոյճ մի քար, որի ճակատին կարդում եմ.

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆ

Խորն ու կարօտալի մի զգացմունք յուզում է հոգեկան աշխարհս եւ ահա աչքերիս առաջ պատկերանում սիրելի պօէտն իր շինար բոյով, բարի դէմքով եւ ժպտուն ու խոսուն աչքերով:

Պատկերանում են նաեւ մեծ արուեստագէտի վրձինած գեղարուեստական անմահ կտաւները — «Անուշ», «Սասունցի Դաւիթ», «Թմբկաբերդի առումը», «Ահ, Թամար», «Անիծած հարսը», «Փարւանա», «Հին օրհնութիւն», «Շունն ու կատուն», «Գութանի երգը», ո՞ր մէկ գեղեցիկ նկարը, ո՞ր մէկ արձանը յիշել, ո՞ր մէկն արձանագրել:

Ի՞նչպէս չը յիշել եւ նրա քանդակած հերոսները — Թախծոտ եւ վշտահար Անուշը, ղժբախտ Մարօն, դաժան Մօսինը, դարդոտ Սարօն — աժդահա Սաֆօն: Շատերի սրտերում փորագրուած են այդ գեղեցիկ նկարները, շատերի հոգիներում քանդակուած այդ արձանները:

Այդտեղ է բանաստեղծի խոշոր արժանիքը:

*

Ո՞ւր է, սակայն, մեծ արուեստագէտի հողակոյտի վրայ կերտուած մեծ արձանը, ո՞ւր է նրա անուան արժանի հսկայ կոթողը: Չկայ ո՛չ մի արձան, ո՛չ մի կոթող: Միանգամայն աններելի վերաբերմունք: Արձանի տեղ յղկուած կլոր քարէ չորս սիւներ՝ երկաթէ փշաթելերով զարդարել են հողակոյտը, որի հիւսիսային կողմը բազմած քառակուսի փոքր, անպաճոյճ քարի վրան սեւ տառերով փորագրուած է.

ՅՈՎՀԱՆՆԷՍ
ԹՈՒՄԱՆԵԱՆ
1869 † 1923

ՆԱՐ-ԴՈՍ
(ՄԻՔԱՅԷԼ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ)
(1867—1933)

«Աննա Սարդիսեան», «Տանտիրոջս աղջիկը», «Սպանուած աղաւնի», «Պայքար», «Մահ» — ահա գեղարուեստական այն մեծ եւ նուրբ նկարները, որոնք նկարուած են պաղանդաւոր արուեստագէտի վրձինով: Այդ տաղանդաւոր արուեստագէտի մեծ նկարիչը, նուրբ արուեստագէտը Նար-Դոսն է, Միքայէլ Յովհաննիսեանը:

Կենդանի, շարժուն տիպեր, իրական, ճշգրիտ պատկերներ — ահա ձեր աչքերի առջեւ նկարւում են մէկը միւսից գրաւիչ, մէկը միւսից յուզիչ, երբ կարդում էք դուք նրա պատմուածքներն ու վէպերը: Կարդում էք, ապրում, զգացւում, մտածում, տանջւում, կարդում էք առանց կարուելու: Այդպէս է արուեստագէտ Նար-Դոսը:

*

1929 թուին Թիֆլիսում, հինգերորդ տպարանում առաջին անգամ ծանօթացայ Նար-Դոսի հետ: Ուղիղ վեց ամիս նոյն սեղանի վրայ, դէմ դիմաց նստած, միասին աշխատեցինք «Պրոլետար» թերթի վրայ:

Ծայրահեղօրէն համեստ, մեղմ, սակաւախօս, կարեկից եւ սրտացաւ ու միաժամանակ բարեխիղճ եւ ճշտապահ: Այսպէս էր Նար-Դոսը:

Թաւ յօնքերի տակից խօսում էին քեզ հետ խոհուն եւ խելացի աչքերը: Խնդրեցի գրել, թէ իր վէպերն ու հերոսները ո՛րքան իրական են, ռէալիստական: Զմերժեց: Նրա ձեռագիրը պահում եմ որպէս թանկագին յիշատակ:

*

1933 թուի Յուլիսի 16ն է, երեկոյեան ժամը 5ը: «Պրոլետար» թերթի խմբագրատան դահլիճը հաւաքուել են գրողները, երաժիշտները, նկարիչները, արուեստագէտները: Հատները, նկարիչները, արուեստագէտները: Համախմբուել են ծաղկեպսակներով ծածկուած դագաղի շուրջը: Հնչում է մերթ արեւելեան եւ մերթ արեւմտեան երաժշտութիւնը՝ թախծոտ, յուզիչ խազերով: Գրողները հերթով պահակներ են կանգնում դագաղի շուրջը: Ժամը վեցին երաժշտութեան հնչիւնների տակ դագաղը դուրս են բերում արուեստագէտները եւ խուռն բազմութեամբ շրջապատուած, Ազատութեան հրապարակով շարժւում դէպի Խօջիվանքի գերեզմանատուն:

Վերջին հրաժեշտի խօսք են ասում արուեստի տարբեր ճիւղերի ներկայացուցիչները — Դարբինեան, դաշնակահար Տէր-Դաւթեան, ռէժիսէօր Քափանակեան: Հրաժեշտ են տալիս եւ վրաց գրողները, խմբագիրներ: Բոլորն էլ չեչտում են եւ ընդգծում տաղանդաւոր ռէալիստ վարպետի կուլտուրական մեծութիւնը:

Ժամը ութին, երաժշտութեան հնչիւնների տակ, դագաղն իջնում է գերեզման, բանաստեղծ Յովհաննէս Թումանեանի շիրմին կից: Հողակոյտը ծածկւում է պսակների եւ ծաղիկների փնջերով: Խոնարհւում են կարմիր դրօշակները:

ԱՂԷՔՍԱՆԴՐ ՔԻՇՄԻՇԵԱՆՑ
(1842—1914)

Հայ գրականութեան մէջ մի համեստ էջ է գրաւում Աղէքսանդր Քիշմիշեանցը: Գրական ասպարիզում նա յայտնի դարձաւ ժողովրդի կեանքից վերցրած փոքրիկ պատկեր-

© National Library of Armenia

ներով — «Գրօշօ», «Կրակի շուրջը» եւ այլն, ժողովրդականութիւն ստացաւ իր «Օրիորդ Բերոյեանց» կոմէդիայով։

*

Շիրմի վրան հանդչում է սեւ մարմար փայլուն քարից կերտուած եւ քառակուսի ֆօրմաներով քանդակուած մի կոթող, որը վերջանում է սեւ-փայլուն կլոր մարմարէ սիւնով։ Մարմարէ պատուանդանի վրայ ոսկեզօծ տառերով քանդակուած է.

ԱՂԷՔՍԱՆԴՐ ՅՈՎՍԷՓԵԱՆ ՔԻՇՄԻՇԵԱՆՑ
1842—1914

ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԵԱՆ
(1840—1911)

Հայ մանուկները քեզ երբե՛ք չպիտի մոռանան, սիրելի պօէտ։

Մայրերը դեռ երկար, շատ երկար պիտի պատմեն իրենց սիրելի որդիներին քո հիւսած զեղեցիկ հէքիաթները, պիտի կարդան նրանց քո վարպետ վրձինով նկարած «Անահիտ»ը, «Արեգնազան»ը, «Տորֆ-Անգեղ»ը, «Գիւլնազ տատի հէքիաթը»։

Պատանիներն առանձին հետաքրքրութեամբ պիտի կարդան քո կեանքի գլխաւոր դէպքերը, «Ցարուքիւն եւ Մանուէլ»ը։

Մանուկները դեռ երկար, շատ երկար անգիր պիտի անեն քո հիւսած զողտրիկ երգերը, պիտի երգեն քո սիրուն «Ճախարակը», «Արեւ, արեւ, ե՜կ, ե՜կ»ը, «Ծիտը ծառին ծլլում է», «Ծիծեռնակը», «Աֆաղաղը», «Ուսումնարանը», «Պառաւ հորթը»։

Այսօր էլ դեռ նոր սերունդը առանձին սիրով կարդում է քո վրձինած հէքիաթները, քո հիւսած երգերն անգիր անում, երգում, քանդակում իր սրտի վրայ, զգում է քո մեծութիւնը եւ հպարտութեամբ խօսում քո տաղանդի մասին։

Այսպէս են ջնջում չքթերս բանաստեղծի մահարձանի առաջ։ Եւ ահա պարզ, բայց զեղեցիկ սիւնի եռեւից դծագրւում է պօէտի վեհ պատկերը եւ ես վերջին անգամ տեսնում եմ նորից նրա վիթխարի, պարթեւ հասակը, յաղթ բազուկները, լայն, պայծառ եւ բանաստեղծական ճակատը, խոշոր ու խոհուն աչքերը, երկար մօրուքը, որ առանձին գրաւչութիւն է տալիս նրա բարի, պարզ եւ ժպտուն դէմքին։

*

1911 թուի Յունիսի 20ին, առաւօտեան ժամը 9 եւ կէսին, Թիֆլիսի Վելեամինովսկայա փողոցում, ձեռագիրները ձեռքին տպարան գնալիս, յանկարծամահ եղաւ Աղայեանը։ Գերեզման իջաւ նա 72 տարեկան պատկառելի հասակում։ Հանդչում է Քիշմիշեանի շիրմի կողքին։

Որքան պարզ, անպաճոյճ, նոյնքան գեղարուեստական մի կոթող զարդարում է պօէտի հողակոյտը, որն իր ամբողջութեամբ խոր տպաւորութիւն է գործում իւրաքանչիւր դիտողի վրայ։ Ներքեւում հանդչող թուխ քարից յղկուած քառակուսի երկու պատուանդանի վրայ յաղթական կանգնել է հաստ եւ կլոր թխադոյն կրանիտէ քարէ երկար մի սիւն, որի կրծքին կարդում եմ.

ՄԱՆՈՒԿՆԵՐԻ
ԲԱՐԵԿԱՄ
ՂԱԶԱՐՈՍ
ԱՂԱՅԵԱՆ
1840—1911

Սիւնի վրայ կանգնել է սպիտակ մարմարից կերտուած մի մանուկ, որ աջ ձեռքը երեսին դրած՝ ասես մելամաղձոտ սղում է, իսկ ձախ ձեռքին բռնել է մարմարէ զեղեցիկ մի ծաղկեպսակ։

ԱԼԷՔՍԱՆԴՐ ԾԱՏՈՒՐԵԱՆ
(1865—1917)

Կանգնած պօէտի շիրմի առաջ, յիշում եմ նրա կեանքի հերոսական ուղին, յիշում նրա յուզիչ, թախծոտ կեանքի պատմութիւնը.

— «Մօրս հետ ապրում էինք կիսախարխուլ տնակում, շարաթը մի անգամ հազիւ էր մեր բուխարին կրակի երես տեսնում... տաք կերակուր միայն կիրակի օրերն էինք ուտում...»։

Յիշում եմ նրա սեւ ու չարքաշ կեանքի ողբերգական դրաման։ Ինչե՛ր ասես նա չի քաշել։ Եղել է դուքնի աշակերտ դալլաքի, մահուդ ծախողի, մթերավաճառի մօտ...։ Նա քար է կոտրատել Ղարա-Եազի ճանապարհի վրայ, փայտ-փուլաս է ծախել Հալաբարի մէյդանում։ Պայքարել է նա կէս քաղցած, կէս ծարաւ, կէս հիւանդ, կէս առողջ, մի կտոր հացի համար։ Եւ կեանքի դժնդակ պայմաններում առաջ է գնացել ինքնաշխատութեամբ, ինքնակրթութեամբ, հերոսական պայքարով։

— «Ինչ որ արել եմ — գրում է պօէտը — ինչ որ կամ, ամբողջապէս պարտական եմ ինքս ինձ եւ ա՛յն յամառ կուրն, որ մղել եմ կեանքիս չարաբաստիկ պայմանների դէմ։»

Եւ այդ ծանր օրերումն էլ գրել է.

«Երբ որ մեռնեմ, Ատուած սիրէք,
Արձանի տեղ՝ շիրմիս վերայ
Լոկ մի կլոր չոր հաց դրէք,
Վրէն գրած «Քաղցից մեռած»։

*

1917 թուին, Ուրբաթ, Մարտի 31ին, երեկոյեան ժամը 6·15 ր. Թիֆլիսում տարածուեց պօէտի մահուան լուրը։ Ժամանակի մամուլը, գլխաւորապէս «Տարազ»ը, զարդարեցին իրենց էջերը սեւ շրջանակներով։ Նրա կորուստը ողբացին հասարակութեան տարբեր խաւերը։ Ահա ձեզ ցայտուն մի դրուագ.

— Գրական-Գեղագիտական Սալօնը, Հայ գրողների, Բարեգործական, Դրամատիկական, Երաժշտական, Հրատարակչական, Ուսուցչական Միութիւնը, Նուէր Մանուկներին, Բժիշկների ընկերութիւնները, «Մշակ», «Հորիզոն», «Ազրիւր-Տարազ», «Հասկեր», «Գեղարուեստ», «Համբաւարեր» եւ «Վան-Տոսպ» թերթերի խմբագրութիւնները, Քաղաքային Արհեստաւորաց դպրոցը խորին վշտով՝ յայտնում են հայ հասարակութեան, որ Ուրբաթ, մարտի 31ին, երեկոյեան 6 ժամին Թիֆլիսում վախճանուեց բանաստեղծ.

ԱԼԷՔՍԱՆԴՐ ԾԱՏՈՒՐԵԱՆ

Յուղարկաւորութիւնը կիրակի, Ապրիլի 9ին, առ. 9 եւ կէս ժամին դէպի Վանքի եկեղ., իսկ թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը։

Ահա եւ նրա թաղման յուզիչ պատկերը.

— «Ուրբաթ, Ապրիլի 8ը։ Երեկոյ։

Ներկայ էին հայութեան բոլոր խաւերի, կրթական-կուլտուրական հաստատութիւնների ներկայացուցիչները։ Կիրակի առ. 10 ժամին մարմինը դուրս բերին ընակարանից (Բէրուտովսկի փող. թ. 25) իրանց ուսերի վրայ գրականագէտները։ Ամենից առաջ գնում էին արհեստաւորներն իրանց դրօշակներով, երկսեռ հայ աշակերտութիւնը գիմնազիաների, Հայոց եւ արհեստաւորաց դպրոցների, ապա առաջնորդը եւ հոգեւորականութիւնը։ Դագաղը երեք կողմից շրջապատուած էր գրականագէտներով եւ եռեւից ներկայացուցիչներն ազգային հաստատութիւնների ու խուռն բազմութիւն. գիմնազիստների նուագախումբը նուագում էր մինչեւ եկեղեցի։ Դագաղը պճնուած էր թարմ ծաղիկներով, կար միայն երկու պսակ՝ ընտանիքից եւ Մոսկուայի հայ հասարակութիւնից։ Թափորը մի չարք փողոցներով անցաւ եւ մտաւ Վանքի մայր տաճարը, որ լի էր ոչ միայն ներսից, այլ եւ ամբողջ բակը։ Պատարագին երգում էր Ներսիսեան դպրոցի խումբը եւ նշանաւոր օպէրային երգիչ Ամիրջանը։ Եկեղեցում դամբանական խօսեցին Մեսրոպ եպիսկոպոսը եւ Տէր-Ղեւոնդ Աթանասեանը, բակում խօսեցին Հ. Առաքելեան, Գ. Խատիսեան՝ Մոսկուայի հայ հասարակութեան, Իմիդաշուիլի (Թատրոնական լրագրի խմբագիր) վրացիների, Ախվերդով՝ մահմեդականների, Գր. Պօնափարդեան՝ արեւմտահայերի եւ մի գիմնազիստ՝ աշակերտութեան կողմից։ Տիւր հանդէսը հասաւ Խօջիվանքի գերեզմանատանը. բայց դագաղի առջեւ այստեղ խօսեցին Աւետիս Ահարոնեան, Տէր Յարութիւն Ճուղուրեան։ Մարմինը Ալ. Ծատուրեանի ամփոփուեց Ղ. Աղայեանի եւ մեր միւս գրականագէտների թաղում։ Թաղման ծէսը կատարուեց եւ մինչեւ վերջը շարականները երգում էր գերեզմանի վրայ էլ բարիտոն Ամիրջանը»։

Ահա եւ պօէտի մատիտով գրած վերջին կտակը — «Իմ տապանագիրը».

«Երբ կը մեռնեմ, պարզ ու անշուք իմ շիրիմ
Դուք զարդարէք լոկ մի խաչով հասարակ.
Վշտի խաչն էր կեանքիս միակ մտերիմ
Թո՛ղ եւ յաւերժ նիրհս անցնէ խաչի տակ...»։

Կատարեցի՞ն գրականագէտները նրա կտակը։

Ղազարոս Աղայեանի յուշարձանի սահմանագծում բարձրանում է աղիւսով ծածկուած մի հողակոյտ, որի վրայ դրուած թխադոյն կրանիտէ պարզ քարի մէջտեղում փորագրուած է.

ԲԱՆԱՍՏԵՂԾ
ԱԼԷՔՍԱՆԴՐ
ԾԱՏՈՒՐԵԱՆ
1864—1917

ՅԱԿՈԲ ԱՂԱԲԱԲ
(1875 – 1926)

«Ազրիւր», «Հասկեր», «Կարմիր ծիլեր» — ահա մանկական այն ամսագրերը, ուր վրձինուած են պօէտի բանաստեղծութիւնները. մանուկների սրտերում են քանդակուած նրա հիւսած զողտրիկ երգերը։ Իր հասարակական-գրական գործունէութեան ընթացքում նա ամբողջապէս նուիրուեց այդ մանուկների դաստիարակութեանը, հիւսեց նրանց համար պարզ, զեղեցիկ երգեր եւ դարձաւ նրանց ազիզ բարեկամը, սիրելի բանաստեղծը։ Այդպէս էլ մնաց մինչեւ իր մահը։

*

Ղազարոս Աղայեանի յուշարձանի մօտ հանդչում է պօէտը։ Հողակոյտը զարդարում է հաստ երկար մոխրագոյն անպաճոյճ մի մեծ կրանիտէ քար, որի վրայ փորագրուած է.

ՄԱՆՈՒԿՆԵՐԻ
ԲԱՐԵԿԱՄ
ԲԱՆԱՍՏԵՂԾ
ՅԱԿՈԲ ԱՂԱԲԱԲ
1875—1926

© National Library of Armenia

Քանդակուած տողերը շատ գեղեցիկ կերպով բնորոշում են բանաստեղծի դերը, նրա կեանքի ողջ պատմութիւնը:

ԲԺԻՇԿ ԳԵՈՐԳ ԱԽՎԵՐԴԵԱՆ
(1818—1861)

Բացէք 19րդ դարի առաջին շրջանի Թիֆլիսի կուլտուրական կեանքի պատմութիւնը եւ ահա այնտեղ դուք կը կարդաք լուսաւոր, առաջադէմ եւ գրասէր մի բժշկի անունը: Դա Գէորգ Ախվերդեանն է:

Իր ժամանակի կուլտուրական այդ բժիշկն առաջինը հանդիսացաւ, որ խորապէս հասկացաւ ժողովրդական ստեղծագործութիւնների խոշոր արժէքը եւ առանձին գուրգուրանքով հաւաքեց ու գրի առաւ աշուղական երգերն ու տաղերը: Եւ նա կերտեց մի գեղեցիկ արձան: Դա Սայեաթ-Նօվայի *անտիպ երգերի գիտական լուրջ ուսումնասիրութիւնն է, որն առաջին անգամ լոյս տեսաւ 1852 թուին Մոսկուայում: Այդ հոյակապ աշխատանքով էլ Ախվերդեանը յայտնի դարձաւ հայ բանասիրական գրականութեան մէջ: Այժմ էլ նրա անունն ամենասերտ կերպով կապուած է աշուղ Սայեաթ-Նօվայի երգերի հետ:*

*

1830 *թուին նա մտաւ Մոսկուայի Լազարեան ճեմարանը, ուր* 1834 *թուին աւարտելով՝ անցաւ Համալսարանի բժշկական ֆակուլտէտը:* 1839 *թուին վերադառնալով Թիֆլիս, ստանձնեց զինուորական բժշկի պաշտօնը: Զինուորական նախարար Չերնիշեւը* 1842 *թուին նրան իր մօտ հրաւիրեց անձնական բժշկի պաշտօնով:* 1842 *թուին նա դարձեալ վերադարձաւ Թիֆլիս եւ նուիրուեց հայ ժողովրդական բանահիւսութեան ուսումնասիրութեան:*

*

Թիֆլիսի Խօջիվանքում, Աղայեանի շիրմի մօտ, երկաթահիւս գեղեցիկ վանդակապատի մէջ, հանգչում է բանասէր բժիշկը:

Քառակուսի, գեղեցիկ ֆորմաներով քանդակուած, սպիտակ մարմարէ հաստ մի արձան զարդարում է նրա հողակոյտը, որի արեւմտեան կողմը, կամարակապ ճակատին փորագրուած է.

ԲԺԻՇԿ
ԳԷՈՐԳ ԱԽՎԵՐԴԵԱՆ
ԱԽՎԵՐԴԵԱՆՑ
1818—1861

ԱՌԱՔԵԼ ԱՐԱՐԱՏԵԱՆ
(1808—1887)

Բնիկ Թիֆլիսեցի: Ներսիսեան դպրոցի, Ալամդարեանի տեսչութեան շրջանի սաներից: Աւարտելով Ներսիսեանն, իր ամբողջ կեանքը նուիրեց մանկավարժութեան: Երկար տարիներ Թիֆլիսի Գիմնազիայում հայերէն լեզուի դասատու նշանակուեց: Այդ ասպարէզում էլ մնաց մինչեւ իր մահը:

Հայեացքներով պահպանողական: Երկար ժամանակ խիստ, բայց անմիտ պայքար մղեց Նազարեանի դէմ: Այդ պայքարի արդիւնք են նրա 1858 *թուին Նազարեանի դէմ գրած երկու գրքոյկը —* «Դիմագրաւ ընդդէմ սատան յարուցելոց ամենապատուական լեզուիս Հայոց» *եւ* «Վարդապետութիւն կրօնի»:

*

Խօջիվանքում անպաճոյճ մի հողակոյտի տակ հանգչում է Արարատեանը:

ՊԵՐՃ ՊՌՕՇԵԱՆ
(1837—1907)

Աշտարակ գիւղի եւ ժողովրդի կեանքի տաղանդաւոր նկարիչն է Պռօշեանը: Մեծ կտաւների վրայ համարձակ վրձինով նկարեց նա մի ամբողջ գիւղի, գիւղական հասարակութեան տարբեր խաւերի կեանքը: Նրա «Սօս եւ Վարդիթեր»*ը*, «Հացի խնդիր»*ը*, «Կռուածաղիկ»*ը*, «Շահէն»*ը*, «Ցեցեր»*ը*, «Բղդէ»ն, «Ցունոն» *մի-մի ցայտուն եւ հետաքրքիր վաւերագրեր են Արարատեան, Արագածոտն գաւառի գիւղացիութեան կեանքը պատկերող: Այդ վէպերով էլ նա առանձնայատուկ տեղ է գրաւում հայ գրականութեան պատմութեան մէջ:*

Պռօշեանը խոշոր դեր է կատարել եւ դպրոցական ասպարէզում: Նա ունի նաեւ իր առանձին էջը Ռուսահայ թատրոնի պատմութեան մէջ:

*

1907 *թուի Դեկտեմբերին տեղի ունեցաւ ազգագրագէտ-վիպասանի թաղումը Խօջիվանքում: Թիֆլիսի Հայոց դրամատիքական ընկ. վարչութեան ամբողջ կազմը նրա դագաղի վրայ դրեց մի պսակ հետեւեալ մակագրութեամբ,* «Մայրենի բեմի բարեկամ Պերճ Պռօշեանին Թիֆլիսի հայ դրամատիքական ընկերութիւնից»:

*

Մէկ ու կէս մետր բարձր, սեւ եւ սպիտակաւուն բծերով, հաստ քառաձեւ կրանիտէ մի արձան զարդարում է նրա հողակոյտը, մի կոթող, որն իր կերտուածքով բնորոշում է տաղանդաւոր վիպասանի անկուն եւ յամառ աշխատասիրութեան ոգին, նրա ստեղծագործական կուռ, երկաթէ կամքը:

Մարմարէ յուշարձանի արեւելեան ճակատը զարդարուած է սպիտակ փոքր մարմար քարով, որի վրայ փորագրուած է.

ՎԻՊԱՍԱՆ
ՊԵՐՃ ՊՌՕՇԵԱՆ
1837—1907
Հ. Գ. վարկ. 1924

Յուշարձանի կատարին յաղթական իշխում է սպիտակ մարմարից կերտուած գեղեցիկ մի վազ:

—

Նստած շիրմի ծայրին, խորասուզւում եմ նրա վրձնած գեղեցիկ պատկերների մէջ: Եւ ահա աչքերիս առջեւ նկարւում են Աշտարակի գիւղացու տուն ու տեղը, նիստ ու կացը, սովորութիւնները, հին կենցաղի բնորոշ երեւոյթները — նշանադրութիւնը, հարսանիքը, ուխտագնացութիւնը: Տեսնում եմ եւ գիւղական կեանքի բազմազան տեսարանները: Ահա մի տեղ գեղջկուհիները օղի են քաշում, մի այլ տեղ դօշաբ եփում, շուջուխ, ալանի պատրաստում: Ահա եւ Համբարձումը: Ջահէլ գեղջկուհիները շրջան բռնած, զուռնայի եւ դհօլի նուագածութեան ներքոյ, գեղեցիկ եւ սահուն պար են գալիս: Լսում եմ եւ նրանց ժողովրդական պարզ, աննման երգերը, յուզիչ ջանգիւլումները:

Ահա եւ գիւղական տիպերը — սիրատոչոր Սօսն ու Վարդիթերը, *սրտակից* Գարեգինը, *ժիր ու բարի* Հեքումը, *դժբախտ* Հեղնարը, *տարբեր խոհերով ու հոգեբանութեամբ:*

Ի՞նչպէս չը յիշել եւ նրա գծագրած գիւղական ցեցերը, վաշխառուները — Սաքօն, Խուդօն, Գնթունին, Բղդէն, Սիրանը, Դատաւորը, Եասաւուլը:

Այդ խօսուն, կենդանի տիպերի հետ գծագրւում է եւ սիրելի վիպասանն՝ իր լայնեզր գլխարկով եւ հնամաշ փողկապով: Նրա նեղ ճակատը, խոր ընկած սուր-սուր նայող աչքերը, ճերմակ եւ երկար մօրուքն առանձին գրաւչութիւն են տալիս նրա կլոր եւ ոսկրոտ գեղջկական բարի դէմքին:

—

Վիպասանի շիրմի կողքին հանգչում է նրա կինը՝ ազիզ Աննան: *Թխադոյն, անպաճոյճ կրանիտէ մի քար զարդարել է նրա հողակոյտը, որի ճակատին փորագրուած խաչի ներքոյ կարդում եմ.*

ԱՆՆԱ ՊՌՕՇԵԱՆՑ
ԱՄՈՒՍԻՆ
ՎԻՊԱՍԱՆ ՊԵՐՃ
ՊՌՕՇԵԱՆՑԻ
ԾՆ. 1853 — ՄԱՀ. 1905

ՄԻՔԱՅԷԼ ՊԱՊԱՋԱՆԵԱՆ
(1866—1929)

Տեսե՞լ էք դուք հասարակական եռանդուն, ակտիւ այս գործչին:

Լսե՞լ էք երբեւէ այս հրապարակախօսի պարզ, բայց խորը, մտածուած բանախօսութիւնը: Իր լուրջ դատողութեամբ եւ տրամաբանական վերլուծութեամբ նա կարողանում էր իշխել ձեր սրտի, ձեր զգացումների վրայ:

Այդպէս էր Պապաջանեանը պետական դումայում: Այդպէս էր եւ հասարակական ասպարէզում:

Նա պարզ էր, շիտակ, ժողովրդասէր եւ անշահախնդիր:

Նրա լօզունգն էր — ժողովրդի մէջ:

Նրա դրօշը — ժողովրդի համար:

Նա ժողովրդական կուսակցութեան պարագլուխներից մէկն էր:

Այդ ճանապարհին էլ նա ընկաւ լի յոյսերով եւ վառ ձգտումներով:

*

Թիֆլիսի Խօջիվանքում կայ երկաթեայ ծաղկահիւս մի մեծ եւ ընդարձակ վանդակապատ: Մի քանի ծառեր հսկում են լուռ: Ահա այդտեղ է հանգչում Պապաջանեանը: Հողակոյտը զարդարուած է մուգ-սպիտակ եռանկիւնաձեւ մարմարէ փոքրիկ կոթողով, որի արեւմտեան ճակատին ծածկուած սպիտակ մարմար քարի վրայ կարդում եմ.

ՄԻՔԱՅԷԼ ՊԱՊԱՋԱՆԵԱՆ
1866—1929
МИХАИЛ ИВАНОВНА ПАПАДЖАНОВ

(Շարունակելի:) ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

© National Library of Armenia